ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՍԱՏՐՅԱՆ ԷԼԼԱ ԱԶԱՏԻ

ՊՈՍՏՄՈԴԵՌՆԻՍՏԱԿԱՆ ՔՐՈՆՈՏՈՊԸ ԴՈՆ ԴԵԼԻԼՈՅԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ժ. 01. 07 - «ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2022

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանում

Գիտական ղեկավար՝

բանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ
Կարինե Հրաչիկի Գուլանյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր
Գայանե Վիուլի Եղիազարյան

բանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ
Վահե Արամի Արսենյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականագիտության ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2022թ.-ի հուլիսի 7-ին, ժամը 14:30-ին, Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի 066 մասնագիտական խորհրդի նիստում: Հասցե՝ ք. Երևան, Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ-ի Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի մասնաշենք, 422 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գրադարանում:
Սեղմագիրն առաքված է 2022 թ. մայիսի 29-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝
բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ **Ա.Վ. Եգանյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսությունը նվիրված է ամերիկացի ժամանակակից արձակագիր, էսսեիստ ***Դոն ԴեԼիլոյի*** ստեղծագործություններում ***պոստմոդեռնիստական քրոնոտոպի*** ուսումնասիրությանը, որի նպատակն է վերհանել ժամանակ և տարածություն հասկացությունների առանձնահատկությունները, մեկը մյուսով պայմանավորված փոխազդեցություններն ու փոփոխությունները:

Դոն ԴեԼիլոյի ստեղծած գրական ժառանգությունը հնարավորություն է ընձեռում ամբողջական պատկեր կազմել 20-րդ դարավերջի և 21-րդ դարասկզբի ամերիկյան հասարակության մասին և դիտարկել այնտեղ կատարվող փոփոխությունները: Ամերիկացի հեղինակը սկսել է ստեղծագործել դեռևս նախորդ դարի 70-ականներից և շարունակում է ընթերցողի դատին ներկայացնել նորանոր վեպեր: Նրա երկերը ներկա և ապագա աշխարհների պատկերումն են՝ տեղեկատվական և նորագույն տեխնոլոգիաների, մեդիայի՝ հասարակական կյանք ներթափանցման, սպառողական հասարակության, սառը պատերազմի, ահաբեկչության, քաղաքական սպանությունների, նոր հասարակության մեջ արվեստագետի տեղի ու դերի նվազման համատեքստում:

Պոստմոդեռնիստական գրականության մեջ հիմնովին փոխվում է ժամանակ և տարածություն հասկացությունների դասական ընկալումը: Իր ստեղծագործություններով՝ ԴեԼիլոն հիմք է դրել քրոնոտոպի ընկալման նոր ավանդույթի: Նրա վեպերում քրոնոտոպի կառուցումը մեծապես պայմանավորված է նորագույն տեխնոլոգիաների զարգացմամբ ու տեղեկատվության ազատ հոսքով, որոնք առավել մեծ հնչեղություն են ստացել հատկապես վերջին երկու տասնամյակներում և մասնավորապես դրսևորվել Դոն ԴեԼիլոյի՝ 2000-ականներից մինչ մեր օրերը լույս տեսած վեպերում: Սակայն նույն խնդիրներն առկա են նաև ավելի վաղ գրված ստեղծագործություններում («Սպիտակ աղմուկ» (1985) և «Մաո Երկրորդ» (1991)), որոնցում հեղինակն արդեն իսկ կանխագուշակում է մեդիայի և նորագույն տեխնոլոգիաների ապագա կործանարար ազդեցությունը:

Քրոնոտոպը Դոն ԴեԼիլոյի ստեղծագործություններում բնորոշվում է ոչ թե վիպական տարածության ու ժամանակի պարզ փոխկախվածությամբ, այլ քրոնոտոպի կատեգորիաների կամ մեկի, կամ մյուսի գերակայությամբ (որոշ վեպերում գերակա է ժամանակը, որոշներում՝ տարածությունը):

Աշխատանքում հանգամանորեն քննվում են հեղինակի հետևյալ ստեղծագործությունները՝ ***«Սպիտակ աղմուկ»*** (1985), ***«Մաո Երկրորդ»*** (1991), ***«Կոսմոպոլիս»*** (2003), ***«Ընկնող մարդը»*** (2007), ***«Օմեգա կետը»*** (2010), ***«Զրո K»***

(2016), որոնց ուսումնասիրության շրջանակում վերլուծելու ենք քրոնոտոպակերտ միջոցներն ու թեմաները:

Դոն ԴեԼիլոյի վեպերի վերլուծությունը թույլ է տալիս նոր հայացք գցել քրոնոտոպին նվիրված ուսումնասիրությունների պատմության զարգացմանն ու հատկապես պոստմոդեռնիստական ժամանակատարածության առանձնահատկություններին:

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ***արդիականությունը*** պայմանավորված է ԴեԼիլոյի ստեղծագործություններում ժամանակակից հասարակությանը հուզող հարցերի բարձրաձայնմամբ, որոնք ամերիկյան և համաշխարհային պոստմոդեռնիստական գրականության մեջ անմիջական ազդեցություն ունեն ժամանակ-տարածություն հասկացությունների ձևավորման վրա: Սույն գիտական աշխատանքը միտված է համալրելու ամերիկյան պոստմոդեռնիզմին նվիրված ուսումնասիրությունների շարքը և առանձնացնելու պոստմոդեռնիստական քրոնոտոպը՝ հետևելով վեպից վեպ դրա կառուցման առանձնահատկություններին:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության ուսումասիրության առարկան պոստմոդեռնիստական քրոնոտոպի կառուցման առանձնահատկություններն են Դոն ԴեԼիլոյի «***Սպիտակ աղմուկ»*** (1985), ***«Մաո Երկրորդ»*** (1991), ***«Կոսմոպոլիս»*** (2003), ***«Ընկնող մարդը»*** (2007), ***«Օմեգա կետը»*** (2010), ***«Զրո K»*** (2016) վեպերում:

Աշխատանքի ***նպատակն*** է վերլուծել ***պոստմոդեռնիստական ժամանակ և տարածություն հասկացությունների առանձնահատկությունները Դոն ԴեԼիլոյի ստեղծագործություններում:***

Այս նպատակը ենթադրում է հետևյալ ***խնդիրների*** լուծումը.

1. վերհանել գեղարվեստական այն միջոցները և թեմաները, որոնց օգնությամբ կառուցվում է վիպական ***տարածությունը*** Դոն ԴեԼիլոյի վեպերում,
2. վերհանել գեղարվեստական այն միջոցները և թեմաները, որոնց օգնությամբ կառուցվում է վիպական ***ժամանակը*** Դոն ԴեԼիլոյի վեպերում,

3. դիտարկել ժամանակ և տարածություն հասկացությունների դասական ընկալման փոփոխությունները,
4. վերլուծել վիպական ժամանակի և տարածության փոխադարձ կապը Դոն ԴեԼիլոյի վեպերում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

ԴեԼիլոյի գրական ժառանգության ուսումնասիրությանն անդրադարձել են բազմաթիվ գրաքննադատներ ու գրական տեսաբաններ: Հեղինակի ստեղծագործություններին նվիրված բազմաթիվ վերլուծական աշխատանքներ, ծավալուն հոդվածներ, հարցազրույցներ են հրատարակվել ամերիկյան և եվրոպական բազմաթիվ նշանավոր գրականագետների կողմից: Ռուսաստանյան և հայաստանյան գրականագիտության մեջ նույնպես առկա են որոշ քննադատական աշխատանքներ:

Դոն ԴեԼիլոյի ստեղծագործություններում ժամանակ և տարածություն հասկացություններին նվիրված բազում քննադատական աշխատանքների վերլուծությունը վկայում է, որ ուսումնասիրություններից ոչ մեկում չկա անդրադարձ Դելիլոյի ստեղծագործություններում վիպական քրոնոտոպի կարևոր առանձնահատկության վերհանմանը. մի շարք վեպերում՝ տարածության կատեգորիայի գերակայությունը, որը որոշում է վիպական ժամանակը, մյուսներում՝ ժամանակի կատեգորիայի գերակայությունը, որը որոշում է վիպական տարածությունը. սրանով էլ պայմանավորված է ուսումնասիրության ***նորույթը:***

Հարկ է նշել, որ Դոն ԴեԼիլոյի վեպերը մինչ օրս հայերեն թարգմանված չեն, և սույն ատենախոսությունն, ըստ էության, հայ գրականատագիտության մեջ հեղինակի գրական երկերը բացահայտող առաջին լայնածավալ փորձն է:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍԱԿԱՆ-ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Ատենախոսության ***տեսական*** հիմքն են կազմում այնպիսի գրականագետների, փիլիսոփաների և սոցիոլոգների ուսումնասիրություններն ու տեսական աշխատությունները, ինչպիսիք են՝ ***Միխայիլ Բախտինը, Ռոլան Բարթը, Ժան Բոդրիյարը, Էլվին Թոֆլերը, Սլավոժ Ժիժեկը, Դուգլաս Ռաշքովը, Հերբերթ***

Մարքուզեն, Փոլ Սմեթհըրսթը, Սթիվըն Քերնը, Բարտ Քյոնընը, Ումբերտո Էկոն և այլք:

Մեթոդաբանական հիմք են ծառայել պատմահամեմատական, պատմատիպոլոգիական, հերմենևտիկական, համադրական վերլուծական և նշանագիտական մեթոդները:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքի գործնական նշանակությունն այն է, որ տվյալ հետազոտությունը կարող է հիմնարար նյութ հանդիսանալ պոստմոդեռնիստական գրականությամբ զբաղվող այլ մասնագետների համար, ինչպես նաև ուսումնաօժանդակ նյութ լինել ՀՀ տարբեր բուհերի ուսանողների և դասախոսների համար:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

Աշխատանքը քննարկվել է Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի Համաշխարհային գրականության և մշակույթի ամբիոնում և երաշխավորվել է պաշտպանության: Աշխատանքի հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հոդվածներում, միջազգային և միջբուհական գիտաժողովներում ունեցած զեկույցներում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ատենախոսությունը բաղկացած է ***ներածությունից, երկու գլխից, եզրակացություններից, օգտագործած գրականության ցանկից և հավելվածից***:

Ներածության մեջ հիմնավորված են թեմայի ընտրությունը, նորույթն ու արդիականությունը, ներկայացված են հարցի պատմությունն ու Դոն ԴեԼիլոյի ստեղծագործական ուղին՝ պոստմոդեռնիզմի համատեքստում, ձևակերպված են ատենախոսության նպատակն ու խնդիրները:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

«ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՔՐՈՆՈՏՈՊԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԳԵՐԱԿԱ ՄԻԱՎՈՐ ԴՈՆ ԴԵԼԻԼՈՅԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ» («ՍՊԻՏԱԿ ԱՂՄՈՒԿ», «ՄԱՌ ԵՐԿՐՈՐԴ», «ՀՐՈ Կ»)

Աշխատանքի սույն գլուխը նվիրված է վիպական քրոնոտոպի բաղադրիչների ուսումնասիրությանը, տարածության և ժամանակի դրսևորումներին և այն գեղարվեստական միջոցների ու առանցքային թեմաների վերհանմանը, որոնց օգնությամբ հեղինակի վեպերում կառուցվում է տարածությունը:

Այս գլխում հանգամանորեն ներկայացված է, թե ինչպես և ինչ միջոցների ազդեցությամբ են տարածությունն ու ժամանակը հանդես գալիս որպես առանձին միավորներ՝ ստվերելով մյուս բաղադրիչի (տարածությունը առաջնային բաղադրիչ, ժամանակը՝ երկրորդական) կարևորությունը:

Ուսումնասիրված վեպերի շրջանակում տարածական առանձնահատկությունները վերլուծելիս անդրադարձ է կատարվում զանգվածային լրատվական միջոցներին, հեռուստատեսությանը և հիպերմարկետին, ինչպես նաև առանձնատան, բեյսբոլի մարզադաշտի, քաղաքի (Նյու Յորք, Լոնդոն, Աթենք, Բեյրութ), քաղաքակրթությունների (Արևելք-Արևմուտք) տարածական միավորներին և քաղաքային տարածությունից դուրս գտնվող լաբորատորիայի տոպոսին: Տարածության բաղադրիչով պայմանավորված՝ վիպական ժամանակի քննության համատեքստում ուսումնասիրվել են նաև մահվան և անմահության թեմաները:

Ուսումնասիրությունը հիմնված է ֆրանսիացի սոցիոլոգ, տեսաբան Ժան Բոդրիյարի, ամերիկացի տեսաբան Դուգլաս Ռաշքոֆի, իսպանացի սոցիոլոգ և փիլիսոփա Խոսե Օրտեգա-ի-Գասետի և այլոց՝ հեռուստատեսությանը, տեխնոլոգիաներին, սիմուլյակրին և ահաբեկչությանը վերաբերող դրույթների վրա:

Տարբեր տարիներին գրված վեպերում («Սպիտակ աղմուկ»՝ 1985, «Մառ Երկրորդ»՝ 1991, «Հրո Կ»՝ 2016) արտացոլվում են նորագույն տեխնոլոգիաների աստիճանական զարգացումը, դրանց ներխուժումն անհատի առօրյա, ինչպես նաև անհատի և հասարակության զարգացման բացասական միտումները, տեղեկատվական տեխնոլոգիաների և ժամանակ-տարածություն հասկացությունների փոխազդեցությունները: Տվյալ թեմաների առկայությունը թույլ է տալիս ուսումնասիրության մեջ անդրադառնալ ամերիկացի տեսաբան Դուգլաս Ռաշքովի առաջարկած ***ինֆո-քրոնոտոպ*** եզրին, քանի որ ԴեԼիլոյի տեքստերում ժամանակն ու տարածությունը ձևավորվում և փոփոխվում են տեղեկատվության միջոցով և ազդեցությամբ.

«Անընդմեջ զարգացող լրատվամիջոցները դարձել են բնակության վայրի պես իրական մի տարածություն: Եվ այս նոր տարածությունը կոչվում է ինֆոտարածություն: Սա մի նոր տարածություն է՝ բաց մարդկային փոխհարաբերությունների, տնտեսության ընդլայնման և հատկապես հասարակական և քաղաքական գործընթացները մեքենայացնելու համար»[1]:

«Սպիտակ աղմուկ» վեպում *պոստմոդեռնիստական քրոնոտոպը* ձևավորվում է ժամանակ և տարածություն չափումներից հատկապես տարածության գերակայությամբ՝ մեդիատարածության և հիպերմարկետի միջոցով, որոնցում իրադարձությունների կրկնության հետևանքով ժամանակը դադարում է նկատվել: Վեպում մարդկային գոյության տարածական սահմանները փոքրանում են՝ ակնարկելով, որ անհատն իրականում ապրում է հեռուստացույցի՝ լրատվամիջոցների, ժամանցային ծրագրերի, ռեալիթի շոուների ստեղծած իրականության մեջ: Ըստ այդմ՝ ձևավորվում է նոր տարածություն, որն առաջարկում ենք անվանել ***մեդիատարածություն***՝ վիրտուալ իրականություն, որը հեռացնում է անհատին օբյեկտիվ իրականությունից, իսկ իրար հաջորդող տեղեկատվության հոսքից կորսվում է ժամանակի զգացողությունը: Վեպում տարածություն կերտող միջոց է դիտարկվում նաև ***սիմուլյակրը***, որը փոխարինում է իրականությանը և, լինելով հորինված, դառնում միակ իրականը:

Թեև վեպում հիմնական քրոնոտոպակերտ կատեգորիան տարածությունն է, մահվան թեմայով պայմանավորված հայտնվում է նաև ժամանակը, որն այս դեպքում ածանցյալ է տարածությանը, բայց նույնպես կարևոր գործառույթ է կատարում: Մահվան վախը, զբաղեցնելով հերոսների ողջ մտորումները, ստեղծում է սպասման տևական վիճակ, որը կանգնեցնում է նրանց կենսաբանական ժամանակը:

«Մաո Երկրորդ» վեպում քրոնոտոպի կառուցման համար առանցքային են առանձնատան, մարզադաշտի և քաղաքի տարածական միավորները և դրանց առնչվող անհատականության և ահաբեկչության թեմաները: Բեյսբոլի մարզադաշտի տարածությունը ներկայացնում է ապագա աշխարհի տեսլականը, որում անհատը իր տեղը զիջում է ամբոխներին: Վեպը սկսվում է բազմահազարավոր այլազգի և ամերիկացի զույգերի ամուսնական

[1]Rushkoff D. Media Virus. Hidden Agendas in Popular Culture. https://www.scribd.com/doc/155443664/Rushkoff-Douglas-Media-Virus-Hidden-Agendas-in-Popular-Culture/accessed24.06.2018

արարողությամբ, որը տեղի է ունենում «Յանքի» անունը կրող բեյսբոլի մարզադաշտում: ԴեԼիլոն այս ծիսակատարության պատկերմամբ կոտրում է տարածական սահմանները և խոսում գլոբալացման առաջին նախանշանների մասին: Այս դրվագում հեղինակը նաև անդրադառնում է անհատականության թեմային. «*միապարր զանգվածի*»[2] պատկերումով ԴեԼիլոն ցույց է տալիս, որ պսակադրության բազմահազարավոր մասնակիցները մեկն են, ամբոխ՝ բաղկացած անհատներից, որոնք այլևս անհատ չեն, զուրկ են սեփական ես-ից ու գաղափարներից: Նրանք մեկ նպատակի են ձգտում՝ «*ազատվելու ազատ կամքի և մտքի ծանր բեռից*»[3]*:* Վեպի առաջնահատվածը եզրափակում է ստեղծագործության բանալի գաղափարներից մեկը. «*ապագան պատկանում է ամբոխներին*»[4]: Առանձնատունը, որում իրադարձությունների բացակայության և միօրինակության հետևանքով ժամանակն աննկատ է դառնում, խորհրդանշում է արվեստագետի մեկուսացումը գլոբալիզացվող քաղաքից: Իսկ քաղաքների հերթագայությունը գլխավոր կերպարի՝ արվեստագետ-գրողի հետագիծն է, ըստ որի՝ նա փորձում է փրկել ահաբեկչական խմբավորման կողմից պատանդ վերցված մեկ այլ գրողի:

«Մաո Երկրորդ» վեպը պայմանականորեն կարելի է բաժանել երկու մասի: Առաջինը վերաբերում է արվեստագետի կերպարին, իսկ մյուսն ամբողջապես նվիրված է ահաբեկչությանը, ինչպես նաև ահաբեկչական խմբավորումների գործողություններին Միացյալ Նահանգներում և Եվրոպայում: Երկու թեմաների միահյուսմամբ ԴեԼիլոն շեշտադրում է գլոբալացման հետևանքները, աշխարհի վերակառուցումը, հին/նոր աշխարհների և քաղաքակրթությունների բախումը՝ այդպիսով ուրվագծելով աշխարհի ***նոր մոդել***:

«Զրո K» վեպում քրոնոտոպի կառուցման համար առաջնային է տարածությունը՝ մեկուսի վայրում գտնվող լաբորատորիան, որում անընդմեջ կատարվող փորձերը հանգեցնում են ժամանակի զգացողության կորստի: Լաբորատորիայի տոպոսը հավակնում է դառնալ ապագայի՝ անմահության խնդիրը լուծող միջոց:

ԴեԼիլոյի վեպում նորագույն տեխնոլոգիաների կործանարար ազդեցության պատկերումը թույլ է տալիս «Զրո K» վեպում վերհանել հակաուտոպիային բնորոշ առանձնահատկություններ: ԴեԼիլոյի վեպում ներկայացվում է տեխնոլոգիապես զարգացած ինքնուրույն լաբորատորիա, որը նպատակ ունի բարելավելու անհատի կյանքը, վերածվելու ինքնավար

[2]DeLillo D. Mao II. Penguin Books USA Inc. New York. 1992. P. 1.
[3]DeLillo D. Mao II. Penguin Books USA Inc. New York. 1992. P. 7.
[4]DeLillo D. Mao II. Penguin Books USA Inc. New York. 1992. P. 10.

տարածության, որտեղ բնակիչներն իրենց առանձին լեզուն են ունենալու: Այս վեպն ամբողջությամբ տեխնոլոգիաների հաղթանակի մասին է, որտեղ մարդու նոր տեսակ պետք է ի հայտ գա՝ *կիբերմարդը:* Հեղինակն առաջ է քաշում այն թեզը, որ լաբորատորիան վերածվում նոր տոպոսի, նոր վայրի, ինչպես *Օլդոս Հաքսլիի «Չքնաղ նոր աշխարհ»* վեպում: «Կոնվերգենս»-ը մարդկության նոր բնօրրանն է, քանի որ այստեղ է, որ անհատն ունենալու է անմահություն ընտրելու հնարավորություն.

«Մենք լիահույս ենք, որ այս զբաղեցրած տարածքն աստիճանաբար կդառնա նոր մետրոպոլիսի սիրտը, միգուցե ինքնուրույն մի տարածք, որի նմանը մենք չգիտենք»[5]:

Հատկանշական է, որ ԴեԼիլոյի «Սպիտակ աղմուկ», «Մաո Երկրորդ», ինչպես նաև «Կոսմոպոլիս» վեպերում նույնպես կարելի է նկատել հակաուտոպիական գրականությանը բնորոշ տարրեր:

Վեպում ԴեԼիլոն շեշտադրում է նաև նորագույն տեխնոլոգիաների կարևորությունը քրոնոտոպի կառուցման համար. այս դեպքում առաջնային է տարածությունը, քանի որ ժամանակը կարևորվում և իրական է դառնում միայն լաբորատորիայի պատերի ներքո: Հարկ է նշել, սակայն, որ ժամանակը նույնպես որոշակիորեն հանդես է գալիս որպես առանձին բաղադրիչ՝ ***անմահության*** թեմայի միջոցով. ժամանակն անժամկետ երկարաձգվում է. վեպի հերոսներին անմահություն ընտրելու հնարավորություն է ընձեռվում: Եթե նախորդ՝ «Սպիտակ աղմուկ», վեպում ԴեԼիլոն առաջ է քաշում մահվան սպասման և վախի թեման՝ փորձելով հասկանալ՝ ինչպես խուսափել դրանից, ապա ***«Զրո K»*** վեպով հեղինակը կարծես պատասխանում է տարիներ առաջ բարձրացրած հարցին՝ առաջարկելով կիրառել կրիո պատիճներ, սառեցնել մարմինները՝ ապագայում ինչ-որ մի պահի նորից վերակենդանացնելու համար:

[5] DeLillo D. Zero K. Picador. New York. 2016. P. 33.

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԺԱՄԱՆԱԿԸ՝ ՈՐՊԵՍ ՔՐՈՆՈՏՈՊԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԳԵՐԱԿԱ ՄԻԱՎՈՐ ԴՈՆ ԴԵԼԻԼՈՅԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ («ԸՆԿՆՈՂ ՄԱՐԴԸ», «ԿՈՍՄՈՊՈԼԻՍ», «ՕՄԵԳԱ ԿԵՏԸ»)

Աշխատանքի երկրորդ գլուխը նվիրված է ժամանակի և տարածության փոխադարձ կապի ուսումնասիրությանը՝ վիպական ժամանակի կատեգորիայի գերակայության բացահայտման նպատակով: Ըստ այդմ՝ ներկայացվում է վիպական ժամանակի ազդեցությունը տարածությունը վրա, ինչպես նաև քրոնոտոպի ձևավորման մեխանիզմները: Այստեղ շեշադրված են ահաբեկչության և արվեստի թեմաները, ինչպես նաև նորագույն տեխնոլոգիաներով գերհագեցած ավտոմեքենայի և դեպի անցյալ կամ ապագա տանող ճանապարհի տոպոսները: Այս գլխում քննվում է, թե ինչպես է ժամանակը ձևավորում վիպական տարածությունը և ինչպես են վիպական քրոնոտոպում արտացոլվում հասարակական տարբեր երևույթները:

Ժամանակի կատեգորիայի գերակայության ուսումնասիրության շրջանակում որպես քրոնոտոպակերտ միջոցներ հանդես են գալիս արվեստն ու ահաբեկչությունը: Ժամանակ և տարածություն հասկացություններն այս գլխում դիտարկվել են ամերիկացի տեսաբան Փ. Սմեթիըրսթի առաջարկած ***սոցիալական ժամանակ*** և ***սոցիալական տարածություն*** եզրերի համատեքստում, քանի որ տվյալ ստեղծագործություններում ԴեԼիլոն համոզմունք է հայտնում, որ ժամանակակից աշխարհում հենց սոցիալական երևույթներով է պայմանավորված քրոնոտոպի կառուցումը: Հասարակական երևույթների ներգործությամբ քանդվում են ժամանակատարածական հանրային ընկալումները՝ ստեղծելով ժամանակի կամ տարածության գերակայությամբ նոր քրոնոտոպ:

«Ընկնող մարդը» վեպը ներկայացնում է 2001թ. հետահաբեկչական Ամերիկայի Միացյալ Նահանգների հասարակության պատկերը: 2001թ. սեպտեմբերի 11-ին Նյու Յորքում տեղի ունեցած ահաբեկչական գործողություններից հետո ահաբեկչության թեման, որը ստացավ ***9/11*** անվանումը, մեծ հնչեղություն ձեռք բերեց և քննարկման առարկա դարձավ մի շարք հեղինակների ստեղծագործություններում: Այսօր Միացյալ Նահանգներում օգտագործվում է ***9/11-ի գրականություն*** եզրը՝ ներկայացնելու կամ հավաքագրելու այն գրականությունը, որն անմիջականորեն անդրադառնում է պատահարին և ներկայացնում աշխարհն ու անհատի կարգավիճակը 9/11-ին հաջորդող աշխարհում: ԴեԼիլոն արձագանքել է 9/11 դեպքերին՝ տեղի ունեցածից մի քանի

ամիս անց գրելով ***«Ապագայի ավերակներում»*** հոդվածը, իսկ 2007թ. ընթերցողների և գրականագետների դատին հանձնելով ***«Ընկնող մարդը»*** վեպը, որը պատկերում է հետահաբեկչական ամերիկյան հասարակության կարգավիճակը: Ի տարբերություն 9/11-ի ահաբեկչական գործողությունների մասին բազմաթիվ այլ ստեղծագործությունների՝ ԴեԼիլոյի վեպը ներկայացնում է անցումը մասնավոր դեպքից ընդհանուրին, մասնավոր ցավից համամարդկային ցավին ու անհանգստությանը:

Վեպում քրոնոտոպը պայմանավորված է ժամանակային կոնկրետ ամսաթվով՝ 9/11, ինչպես նաև արվեստի և ահաբեկչության թեմաներով: ***Ժամանակը*** դառնում է ահաբեկչության հետևանքների հայելին և կարծես դրան համազոր: Անցյալը դադարում է անցյալ լինելուց, այն մշտապես գոյություն ունի ներկայում՝ դարձնելով այն ***անցյալացած***. վեպում ներկա և ապագա ժամանակային չափումները իմաստազրկվում են՝ տեղը զիջելով ահաբեկչության նկատմամբ վախով լի անցյալին: Իսկ «ապահովության» տարածություն համարվող քաղաքը վերածվում է դարձյալ ահաբեկչության հետևանքով կերտված «վախի ու անապահովության» տարածության:

Ահաբեկչությունից հետո փոխվում են նաև արվեստի տիրույթները և արարման թեմաները. արվեստ-ահաբեկչություն կապը զարգանում է գեղանկարչության և պերֆորմանսի միջոցով: Արվեստը դառնում է ահաբեկչության դեմ պայքարելու և 9/11-ի դեպքերը հիշելու և հիշատակելու միջոց: Ստեղծագործության մեջ հեղինակն անդրադառնում է իտալացի նկարիչ Ջորջիո Մորանդիի կտավներին, որոնց դերը վեպում կարևորվում է այն դրվագով, երբ ահաբեկչական գործողություններից հետո հերոսներն այլ կերպ են սկսում ընկալել դրանց բովանդակությունը. «*անգամ կտավներն են խոսում ահաբեկչության մասին*»[6]: Մինչ ահաբեկչական գործողությունները Մորանդիի կտավն ուղղակի արվեստի նմուշ էր, իսկ 9/11-ից հետո կտավում ներկայացված իրերը հիշեցնում են փլուզված երկնաքերները:

Պարբերաբար կրկնվող պերֆորմանսի քրոնոտոպը սահմաններ չունի, քանի որ այն կարող է կատարվել ցանկացած վայրում, ցանկացած պահի, սակայն գործողությունը մշտապես ուղղված է դեպի ակաբեկչական անցյալի ժամանակատարածություն: Վեպում մի տղամարդ (Ընկնող մարդը) հանկարծակի հայտնվում է Նյու Յորքի փողոցներում և բարձրությունից նետվում է՝ նմանակելով ահաբեկչական գործողությունների ժամանակ այրվող երկնաքերից դուրս թռչող մարդկանց: Հայտնի է, որ ահաբեկչական գործողությունների ընթացքում մի

[6]DeLillo D. The Falling Man. Scribner. NY. 2007. P. 44.

տղամարդ նետվել է երկնաքերից, և այդ ակնթարթը հասցրել է անմահացնել *Associated Press* լրատվական գործակալության լրագրողը: «Ընկնող մարդը» վերնագրված լուսանկարը կայծակնային արագությամբ տարածվում է ողջ աշխարհում: Լուսանկարը նույնպես դառնում է քրոնոտոպակերտ միջոց: Հարկ է նշել, որ հերոսի կողմից իրականացվող անկման պերֆորմանսը կարծես բացառում է 9/11-ի՝ անցյալ դառնալու հավանականությունը և ստիպում, որ անցյալն անընդհատ ներխուժի ներկա, այսինքն՝ արվեստը կապող օղակ է դառնում անցյալ-ներկա ժամանակային հարթության համար, որտեղ ներկան միշտ ուղեկցվում է անցյալով:

«Կոսմոպոլիս» վեպում ժամանակատարածությունը կառուցվում է նորագույն տեխնոլոգիաներով պայմանավորված ժամանակի խախտված հոսքով, ինչպես նաև այդ նույն տեխնոլոգիաներով հագեցած մեքենայի և քաղաքի տոպոսի միջոցով: Վեպում 28-ամյա միլիոնատեր երիտասարդը, անցնելով Նյու Յորքի պողոտաներով, գնում է իր մանկության վարսավիրի մոտ: Այսպես, ժամանակակից աշխարհի հարուստ ներկայացուցիչը փախչում է նյույորքյան շքեղությունից ու ձգտում դեպի անցյալ՝ իր մանկություն: Հերոսի գիտակցության մեջ ժամանակն անցյալն է: Վերադառնալով անցյալը հիշեցնող վայր՝ նա կարծես փորձում է իրեն երջանիկ զգալ և կառուցել ներկան ու ապագան հենց այդ անցյալի հիման վրա, սակայն նորագույն տեխնոլոգիաներով հագեցած և գերզարգացած աշխարհը, որում ապրում է Էրիկը, բացառում է այդ հնարավորությունը:

Մեքենան ապագա աշխարհի մոդելն է, ապագայի կանխատեսումը, ըստ էության, այն ժամանակի մեքենա է: ԴեԼիլոն մեքենան դարձնում է երկու աշխարհներն իրարից տարանջատող միջոց: Մի աշխարհը մեքենայի նորագույն սարքավորումներով գերհագեցած սրահն է, իսկ մյուս աշխարհը՝ դրանից դուրս գոյություն ունեցողը: Հերոսը բազմաթիվ նորագույն սարքավորումների շնորհիվ կարողանում է տեսնել իրադարձությունների հոսքը մինչ դրանց իրականացումը: Մեքենան քրոնոտոպի կառուցման կարևոր միջոց դարձնելուն զուգահեռ՝ հեղինակն անդրադառնում է նաև Նյու Յորքին. վեպում մանրամասն պատկերվում են Մանհեթենի փողոցներն ու քաղաքային կյանքը. ընդգծվում է, որ Նյու Յորքը, շքեղության ու հարստության, նոր կյանքի, նորարարությունների, հաջողությունների քաղաք լինելով, միաժամանակ ցավի ու տխրության տոպոս է:

Քրոնոտոպն այս դեպքում որոշվում է նորագույն սարքավորումներով, որոնք ներկայում արդեն իսկ տալիս են ապագայի պատկերումը: Սա քրոնոտոպի նոր մոդելն է՝ ներկա, որը միաժամանակ ապագայի արտացոլումն է: ԴեԼիլոյի ստեղծագործության մեջ ապագան բարձր արագությամբ ներխուժել է ներկա և ներկայանում է տեխնոլոգիաների ձևով:

«Օմեգա կետը» վեպում հեղինակին հետաքրքրում է ***ժամանակի երկարաձգման*** ֆենոմենը: Ժամանակի դանդաղ ընթացքը թույլ է տալիս նկատել այնպիսի երևույթներ, որոնք վրիպում են աչքից ժամանակի բնականոն ընթացքի դեպքում, արդյունքում դարձյալ փոխվում են ժամանակատարածական ընկալումները: Ըստ ԴեԼիլոյի՝ ժամանակը քաղաքում և անապատում տարբեր է: Քաղաքում ժամանակն ավելի արագ է, ինչը պայմանավորված է տեխնոլոգիաների արագ զարգացմամբ, այնինչ անապատում, որտեղ դրանք բացակայում են, ժամանակը կարծես կանգնած է, ինչը իրադարձությունների բացակայության պատրանք է ստեղծում: Այս ստեղծագործության մեջ ժամանակի հեղինակային հայեցակարգի փոփոխության հիմքում արվեստն է՝ վիդեոինստալյացիան: ԴեԼիլոն ընդգծում է, որ արվեստը կարող է ազդել անհատի ընկալման վրա, իսկ արվեստագետն այն հասարակական օղակն է, որը, լինելով ներկայում, ունակ է ներթափանցելու ապագա, նայելու առաջ ու տեսնելու այն, ինչ շատերը տեսնել չեն կարող: Այս վեպում մեկօրյա տևողությամբ վիդեոինստալյացիայի օրինակով բացահայտվում է ԴեԼիլոյի այն հայեցակարգը, որ ժամանակի դանդաղ հոսքի դեպքում նկատելի են դառնում տարածական մանրուքները, որոնք ժամանակի բնականոն հոսքում կորսվում են: Մյուս կողմից՝ ժամանակը պայմանավորված է տարածությամբ. տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունից դուրս անապատում ժամանակի հոսքը, թվում է, թե դանդաղում է, այնինչ քաղաքում նույն գործոնների ներգործությամբ՝ ժամանակն արագ է հոսում:

«Օմեգա կետը» վեպում հեղինակը շեշտադրում է ժամանակի ճկուն լինելու առանձնահատկությունը, ինչպես նաև ժամանակի ընկալման կապը տարածության հետ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնասիրելով պոստմոդեռնիստական քրոնոտոպը Դոն ԴեԼիլոյի ստեղծագործություններում ՝ հանգում ենք հետևյալ եզրակացություններին.

1. Դոն ԴեԼիլոյի ստեղծագործություններում պոստմոդեռնիստական քրոնոտոպի առանձնահատկություններն արտահայտվում են ժամանակատարածական կատեգորիաներից որևէ ***մեկի գերակայությամբ մյուսի նկատմամբ*** և հարաբերական կախվածությամբ մյուսից: Այսպես՝ հեղինակի մի շարք վեպերում *(«Սպիտակ աղմուկ», «Մաո Երկրորդ», «Հրո Կ»)* վիպական տարածությունը որոշում է վիպական ժամանակը, մյուս վեպերում՝ հակառակը *(«Ընկնող մարդը», «Կոսմոպոլիս», «Օմեգա կետը»)*:
2. Տարածությունը՝ որպես քրոնոտոպի դոմինանտ միավոր կառուցվում է ***տեղեկատվական տեխնոլոգիաների***, պոստմոդեռնիստական գրականությանը բնորոշ ***սիմուլյակրի*** և ***տոպոսների*** խճանկարայնությամբ (հիպերմարկետ, առանձնատուն, բեյսբոլի մարզադաշտ, քաղաք, լաբորատորիա):

   2.1. «Սպիտակ աղմուկ» վեպում վիպական տարածությունը կառուցվում է տեղեկատվական տեխնոլոգիաների, զանգվածային լրատվամիջոցների, մասնավորապես՝ հեռուստատեսության և ռադիոյի միջոցով, որոնք ձևավորում են մեր կողմից առաջարկած օբյեկտիվ իրականությանը հակադրվող վիրտուալ ***մեդիապարածությունը,***

   - Զանգվածային լրատվամիջոցների ներգործությամբ փոխվում է ***ընտանիքի***՝ որպես հասարակական միավորի քրոնոտոպը. մեդիատարածությունը հերոսների համար դառնում է ավելի հավաստի ու իրական, քան օբյեկտիվ իրականությունը:
   - Տեղեկատվական տարածությունը կերտվում է նաև ***սիմուլյակրի*** միջոցով. աղետի տեսարանների սիմուլյացիայի միջոցով «Սիմուվաք» պերֆորմանսը հանրային գիտակցության մեջ աղետը դարձնում է սովորական երևույթ:
   - Վեպի տարածքային կարևոր ***տոպոսներից*** է հիպերմարկետը՝ որպես սպառողական հասարակության խորհրդանիշ: ԴեԼիլոյի կանխատեսմամբ՝ այն ապագա քաղաքի տարածական մոդելն է, որում ժամանակն աննկատ է դառնում գործողությունների պարբերական կրկնության արդյունքում:

2.2. «Սպիտակ աղմուկ» վեպում քրոնոտոպ ստեղծող երկու տարածական տոպոսներից՝ մեդիատարածությունից և հիպերմարկետից բացի, կա մեկ այլ քրոնոտոպակերտ գործոն. ***մահվան սպասման թեման***, որով պայմանավորված վիպական ժամանակն է այդ հատվածում որոշակի գերակայություն ստանում:

2.3. «Մաո Երկրորդ» վեպում տարածությունը կառուցվում է մի շարք ***տոպոսների*** միջոցով՝ ստեղծելով պոստմոդեռնիստական գրականությանը բնորոշ ***ռիզոմորֆ*** կառուցվածք:

- Ամայի վայրում տեղակայված ***առանձնատան*** տոպոսը խորհրդանշում է հանրային ոլորտում այլևս որևէ ազդեցություն չունեցող արվեստագետի փախուստը քաղաքային մշակույթից: Մյուս կողմից, առանձնատունը ներկայացնում է մեկուսի քրոնոտոպ:
- ***Բեյսբոլի մարզադաշտում*** կատարվող զանգվածային բազմազգ ամուսնությունները ներկայացնում են գլոբալացման գաղափարը՝ վերացնելով ազգային, քաղաքակրթական, մշակութային սահմանները:
- Գլոբալացման ազդեցությունը տեսանելի է նաև ***քաղաքի տոպոսի*** (Նյու Յորք, Լոնդոն, Աթենք, Բեյրութ) պատկերման մեջ: Քաղաքները կորցնում են իրենց բնորոշ առանձնահատկությունները՝ դառնալով գլոբալացման «զոհ»:
- Վեպում վիպական ժամանակի պատկերման միջոց է նաև ***լուսանկարը,*** որը ժամանակակից աշխարհում արվեստագետի ճանաչելիության գրավականն է:

2.4. «Զրո K» վեպի քրոնոտոպը ներկայացված է փակ, մութ, նորագույն տեխնոլոգիաներով և աղետի տեսարաններ ցուցադրող մեծ էկրաններով կահավորված մեկուսի ***լաբորատորիայի*** տարածությամբ, որում մշակվում է անմահության տեսլականը. այդպիսով՝ տարածության մեջ կերտվում է ժամանակը՝ ապագան, որում անհատին հնարավորություն է տրվելու ընտրել մահվան ու անմահության միջև:

3. Եթե ***վիպական տարածության*** գերակայությունը ժամանակի նկատմամբ հիմնականում որոշվում է մեդիատարածութամբ և քաղաքների տոպոսներով, ապա ***վիպական ժամանակի*** գերակայությունը տարածության նկատմամբ հիմնականում որոշվում է ***թեմաներով՝*** ահաբեկչություն, գլոբալացում, արվեստ:

3.1. «Ընկնող մարդը» վեպը կառուցվում է 9/11 ամսաթվի շուրջ: Վեպում ներկայացված է 9/11-ի ահաբեկչական գործողությունների հետևանքով ձևավորված

սոցիալական ժամանակը: Ըստ այդմ՝ հասարակական գիտակցության մեջ ներկայի և ապագայի ժամանակային չափումները խեղաթյուրվում են. ներկան լի է անցյալում տեղի ունեցած ահաբեկչության նկատմամբ վախով և մեր բնորոշմամբ դառնում «***անցյալացած***»:

3.2. «Ընկնող մարդը» վեպում ***արվեստը*** դառնում է անցյալի հիշողության պատկերման միջոց: Այն արտահայտված է լուսանկարի և դրանում պատկերված տեսարանի պերֆորմանսի միջոցով, որն իրենից ներկայացնում է ահաբեկչական գործողությունների ժամանակ երկնաքերներից ընկնող մարդու թռիչքը: Պերֆորմանսի կրկնվող տեսարանը չունի ժամանակատարածական սահմաններ. կատարվում է ցանկացած վայրում, ցանկացած պահի:

3.3. «Կոսմոպոլիս» վեպում ***վիպական ժամանակն*** արտահայտված է գերժամանակակից տեխնոլոգիաներով հագեցած մեքենայի տեղաշարժի միջոցով: Այս տեխնոլոգիաները, խախտելով գծային ժամանակի կառուցվածքը, ապագան տեղափոխում են ներկայի տիրույթ: Ներկան որոշակի առնչություններ ունի նաև անցյալի հետ, ինչն արտահայտված է հերոսի՝ դեպի անցյալի ժամանակատարածություն վերադառնալու ձգտումով: Նորագույն գերժամանակակից տեխնոլոգիաներով հագեցած մեքենան, ըստ էության ***ժամանակի մեքենա*** է, որը հերոսին հնարավորություն է տալիս լինել թե՛ ներկայում, թե՛ վիրտուալ ապագայում:

3.4. «Օմեգա կետը» վեպի քրոնոտոպում ժամանակը երկարաձգվում է. քսանչորս ժամ տևողությամբ վիդեոինստալյացիայի օրինակով ԴեԼիլոն ցույց է տալիս, որ ժամանակի դանդաղ հոսքը թույլ է տալիս տեսնել երևույթներ, որոնք ժամանակի բնականոն հոսքում վրիպում են ուշադրությունից: Հեղինակը փորձարկումներ է անում ժամանակի հետ՝ ներկայացնելով ժամանակի անհատական ընկալման առանձնահատկությունները՝ երբեմն շեշտադրելով դրա արագ (քաղաք), երբեմն՝ դանդաղ (անապատ) հոսքը:

4. Պոստմոդեռնիստական գրականության համատեքստում ժամանակ ու տարածություն կատեգորիաները, ըստ մեր ուսումնասիրած վեպերի, միտված են կերտելու ոչ միայն ***նոր աշխարհընկալում***, այլև ***աշխարհի նոր մոդել***՝ նոր քրոնոտոպի առկայությամբ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ՀՈԴՎԱԾՆԵՐԸ

1. The Peculiarities of Chronotope in Don Delillo's Novel "Falling Man". Armenian Folia Anglistika. International Journal of English Studies. 1-2(10). Yerevan. Lezvakan Horizon. 2012. P. 131-137
2. Տեղեկատվական տեխնոլոգիաների արտացոլումը Դոն ԴեԼիլլոյի «Սպիտակ աղմուկ» վեպում: «Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի», 1(40), Երևան, «Լինգվա» հրատ., 2017 թ., էջ 66-74:
3. Զանգվածային լրատվամիջոցների և ահաբեկչության արտացոլումը Դոն ԴեԼիլլոյի «Մաո II»վեպում: «Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի», 1(42), Երևան, «Լինգվա» հրատ., 2017 թ., էջ 124-134:
4. Ժամանակ և տարածություն հասակացությունների առանձնահատկությունները Դոն ԴեԼիլլոյի «Կոսմոպոլիս» վեպում: «Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարա-կագիտական համալսարանի», 1(40), Երևան, «Լինգվա» հրատ., 2017 թ., էջ 135-146:
5. Временные и пространственные взаимодействия в романе Дона ДеЛилло «Точка Омега». Инновационное развитие N 7 Е-Принт. Пермь. 2017. Стр. 45-47.
6. Արվեստի թեման Դոն ԴեԼիլլոյի «Ընկնող մարդը» վեպում: «Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի», 1(46); Լեզվաբանություն և բանասիրություն: Երևան, «Լինգվա» հրատ., 2018 թ., էջ 36-41:
7. Տարածության պատկերման առանձնահատկությունները Դոն ԴեԼիլլոյի «Մաո Երկրորդ» վեպում: Գրականագիտական հանդես: ԺԸ: Երևան: «Արմավ» հրատ., 2019 թ., էջ 149-156:
8. Տարածություն և ժամանակ հասկացությունների առանձնահատկությունները Դոն ԴեԼիլլոյի «Զրո Կ» վեպում: Գրականության և մշակույթի արդի հիմնախնդիրներ: Պրակ ԺԲ: Երևան, «Լինգվա» հրատ., 2020թ. էջ 150-155:

АСАТРЯН ЭЛЛА АЗАТОВНА

ПОСТМОДЕРНИСТСКИЙ ХРОНОТОП В ТВОРЧЕСТВЕ ДОНА ДЕЛИЛЛО

Защита диссертации на соискание ученой степени кандидата филологических наук состоится 07.07.2022 года в 14:30 на заседании специализированного совета 066 ВАК ("Зарубежная литература"), действующего в Ереванском государственном университете, по адресу г. Ереван, ул. А. Манукяна 1 (7-й корпус ЕГУ, факультет Европейских языков и коммуникации, аудитория 422).

РЕЗЮМЕ

Диссертация посвящена ***постмодернистскому хронотопу*** в творчестве современного американского писателя, эссеиста ***Дона Делилло***, в рамках которого будет выявлена специфика понятий «время» и «пространство», а также определяемые ими взаимодействия и перемены. ***Актуальность*** темы диссертации обусловлена тем, что в произведениях Делилло поднимаются волнующие современное общество вопросы, непосредственно влияющие на формирование понятий «время-пространство» в американской и мировой постмодернистской литературе. ***Цель*** работы заключается в анализе специфики понятий «время» и «пространство» в произведениях Дона Делилло. **Предме**т исследования - особенности выстраивания постмодернистского хронотопа в романах Дона Делилло ***«Белый шум»*** (1985), ***«Мао II»*** (1991), ***«Космополис»*** (2003), ***«Падающий»*** (2007), ***«Точка Омега»*** (2010), ***«Зеро К»*** (2016).

Анализ многочисленных критических работ, посвященных данной теме в произведениях Дона Делилло, показывает, что ни в одном из исследований не выявляются важные особенности эпического хронотопа в творчестве автора: в ряде романов - это приоритет категории пространства, которое определяет эпическое время, в других – важность категории времени, кое формирует эпическое пространство. Этим и обусловлена научная ***новизна*** исследования. Стоит отметить, что романы Дона Делилло до сих пор не переведены на армянский язык, и данная диссертация, по сути, является первой серьезной попыткой в армянском литературоведении представить творчество писателя.

Диссертация состоит из ***Введения, двух глав, Заключения, Списка использованной литературы и Приложения.***

Во ***Введении*** обосновывается выбор темы, новизна и актуальность, представлена история вопроса и творческий путь Дона Деллило в контексте постмодернизма, сформулированы цели и задачи диссертации.

Первая глава диссертации ***«Пространство как основная единица формирования хронотопа в произведениях Дона Делилло» («Белый шум», «Мао II», «Зеро К»)*** посвящена проявлениям эпического пространства и времени, выявлению художественных средств и основных тем, при помощи которых в романах автора выстраивается пространство. В этой главе мы аргументируем, как и под влиянием каких средств пространство и время выступают в качестве отдельных единиц, превалируя друг над другом (пространство в данных романах является первичным компонентом, время - второстепенным). При анализе пространственных особенностей в рамках исследованных романов затрагиваются темы средств массовой информации, телевидения и гипермаркета, а также топосы особняка, бейсбольного поля, города (Нью-Йорк, Лондон, Афины, Бейрут), цивилизаций (Восток-Запад) и лаборатории, находящейся вне городского пространства.

Во **второй** главе диссертации ***«Время как основная единица формирования хронотопа в произведениях Дона Делилло» («Падающий», «Космополис», «Точка Омега»)*** представлено влияние эпического времени на пространство путем выявления механизмов формирования хронотопа. Здесь акцентируются темы терроризма и искусства, а также топосы автомобиля и дороги, перенасыщенных новейшими технологиями. В этой главе мы прослеживаем, как время формирует эпическое пространство и как различные общественные явления отражаются в эпическом хронотопе. В качестве хронотопоформирующих средств выступают искусство и терроризм. Понятия «время» и «пространство» рассматриваются в контексте терминов ***«социальное время»*** и ***«социальное пространство»***. Творчество Делилло убеждает, что формирование хронотопа в современной литературе обусловлено именно социальными явлениями.

В **Заключении** диссертации обобщаются итоги проведенного исследования. В конце работы приведен полный **Список** использованных источников. В **Приложении** представлены некоторые картины, важные для исследования.

ELLA ASATRYAN AZAT
THE POSTMODERN CHRONOTOPE IN DON DELILO'S WORKS

The defense of the dissertation will take place on 07.07.2022 at the HQC of RA's specialized council 066 of "Foreign Literature" in Yerevan State University (address: Yerevan, Aleq Manukyan str. 1, YSU, 7th building, Faculty of European Languages and Communication, room 422).

SUMMARY

The dissertation is dedicated to the postmodern chronotope in the works of the American contemporary writer Don DeLillo, in frames of which, the peculiarities of the concepts "time" and "space", as well as their correlation will be revealed. ***The actuality*** of the dissertation lies in the fact that Don DeLillo's works voice the problems of modern society, directly affecting the formation of time and space in American and World postmodern literature. ***The subject*** of the dissertation is the peculiarities of the formation of postmodern chronotope in a number of novels by Don DeLillo ("*White Noise*", 1985, "*Mao II*", 1991, "*Cosmopolis*", 2003, "*Falling Man*", 2007, "*Point Omega*", 2010, "*Zero K*", 2016). ***The aim*** of the work is to analyze the peculiarities of time and space in the mentioned novels by D. DeLillo.

The analyses of critical literature on DeLillo's works reveals that none of them identifies the most essential feature of the epic chronotope as observed in DeLillo's novels; in some novels one of the categories of chronotope becomes dominant over the other (space over time), and in some novels vice versa (time over space). This fact decides the scientific ***novelty*** of the dissertation. Don DeLillo's works are not translated into Armenian and, in fact, this is the first, largescale analyses on the topic.

The dissertation consists of introduction, two chapters, conclusion, bibliography and appendix.

In the Introduction the choice of the theme, scientific novelty and actuality, the aim and objectives, methodological and theoretical basis are indicated. Don DeLillo's literary way is also considered in the context of postmodern literature.

The first chapter of the dissertation, named "**Space As a Dominant Component of Chronotope Formation in Don DeLillo's Works ("White Noise", "Mao II", "Zero K"**) is dedicated to the manifestation of epic space and time and those literary means and essential key themes through which the chronotope is created in DeLillo's mentioned novels. This chapter extensively describes how and why time and

space act as separate and independent components of the chronotope shadowing the importance of the second component (space is primary, while time becomes secondary). The themes of mass media, TV and hypermarket are thoroughly analyzed within the research of spatial peculiarities, besides the spaces introducing a country house, a baseball stadium, cities (New York, London, Athens, Beirut), civilizations (East-West) and also laboratory situated in a desert place are in the center of interest.

The second chapter of the dissertation named "**Time as a Dominant Component of Chronotope Formation in Don DeLillo's Works ("Falling Man", "Cosmopolis", "Point Omega")** presents the impact of epic time on epic space; the means of creating the chronotope are also introduced in this part. According to Don DeLillo, chronotope can be formed under the influence of social factors, such as terrorism and art, thus, these two topics are observed in full. The concepts of the road and the car, equipped with new technologies, are also studied while analyzing time dominance over space.

The chapter discusses how time creates epic space and how different social phenomena (terrorism, arts) are manifested in the chronotope, thus the author brings forward the idea that in modern life social phenomena, in particular, become essential means in the process of chronotope formation. So, the concepts of time and space are considered in the context of the terms social time and social space (the terms are introduced by American literary critic Paul Smethurst).

Conclusion summarizes the carried out research and singles out its results. In the end of the dissertation the whole list of **literary and critical sources** is presented. **The appendix** introduces several pictures mentioned in the work which are important for the research.